



## Հարգելի ընթերցողներ,

Ձեզ ենք ներկայացնում Լրատվամիջոցների գերազանցության բալթյան կենտրոնի պատրաստած էլեկտրոնային տեղեկատու, որն աջակցում է Արևելյան գործընկերության երկրների անկախ լրատվամիջոցներին: Այստեղ ամփոփել ենք դրամաշնորհային հայտարարություններ և Հայաստանի, Ադրբեջանի, Բելոռուսի, Մոլդովայի, Վրաստանի և Ուկրաինայի լրատվամիջոցների ֆինանսավորման հնարավորությունների մասին այլ նորություններ:

Մեր ցանկությունն է, որպեսզի տեղեկատուն ձեզ համար հասանելի դարձնի դոնորների ֆինանսավորումը, կրճատի տեղեկատվություն փնտրելու ձեր ժամանակը և ֆոնդահայթայթումը դարձնի առավել արդյունավետ: «Ֆինանսավորման նորություններ» բաժնում կարող եք ծանոթանալ դրամաշնորհային ամենաթարմ հայտարարություններին:

Կենտրոնը հուսով է, որ տեղեկատուն իր ներդրումը կունենա դոնորների ու Արևելյան գործընկերության երկրների անկախ լրատվամիջոցների միջև երկխոսության գործում և տարածաշրջանի մեղիա դաշտը կդարձնի առավել բազմազան:

Տեղեկատուի հետ կապված առաջարկներով, դիտարկումներով և տպավորություններով կարող եք կիսվել մեզ հետ՝ գրելով [info@baltic.media](mailto:info@baltic.media) հասցեով:

Հարգանքով,

Funds4Media տեղեկատուի հեղինակներ

1. Ocean Plastic Innovation-ի մրցույթը տվյալների վիզուալացման մասնագետների համար
2. Ընդունվում են հայտեր «Հեռանկարներ» ծրագրի «Անդրասահմանային լրագրություն» նախագծի VII-րդ փուլի համար
3. Կրթաթոշակներ անվտանգության թեմայով դասընթացի մասնակցության համար
4. Հետաքննական ազատ լրագրողներ և խմբագիրներ (Freelance Investigative Reporters and Editors (FIRE)). Հետաքննական պատմությունների ծրագիր
5. The Digital Communication Network-ի 2019թ-ի ծրագիրը
6. Logan Nonfiction միջազգային կրթաթոշակներ
7. Սեմինար Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երիտասարդ լրագրողների համար M100 Young European Journalists Workshop 2019
8. Սոցիալական հարցերի լուսաբանմանը նվիրված ծրագիր Արևելյան Եվրոպայի և Կովկասի լրագրողների համար
9. Հետաքննական լրագրության ամառային դպրոցին մասնակցության կրթաթոշակներ
10. Adami Tandem մրցույթը հեռարձակողների և հեռուստատեսային լրագրողների համար
11. The Globe Post-ի մրցույթը լրագրողների համար
12. National Geographic-ի դրամաշնորհները միգրացիայի մասին նախագծերի համար
13. Փոքր դրամաշնորհների մրցույթ միջտարածաշրջանային հետազոտությունների համար
14. Եվրոպական հանձնաժողովում պրակտիկայի հնարավորություն լրագրողների համար
15. Սեմինար երիտասարդ լրագրողների համար
16. Open Eurasia-ի միջազգային ստեղծագործական մրցույթը
17. Սոցիալական ցանցերի համար տեսահոլովակների պատրաստման վարպետանոց

## 1. Ocean Plastic Innovation-ի մրցույթը տվյալների վիզուալացման մասնագետների համար

National Geographic-ի և Sky Ocean Ventures-ի հայտարարած այս մրցույթում կա տվյալների վիզուալացման մասին անվանակարգ: Տվյալների վիզուալացման մասնագետները թիմով կամ որպես անհատ հրավիրվում են պատրաստել վիզուալիզացիա կամ ինֆորգրաֆիկա պլաստիկ թափոնների տարածման և շրջակա միջավայրի աղտոտման մասին տվյալների հիման վրա: Կազմակերպիչները կընտրեն մինչև չորս հաղթող, որոնք իրենց ծրագրերը կվերջնականացնեն National Geographic Partner-ի գրաֆիկայի փորձագետների օգնությամբ: Հաղթողները կստանան 10,000 ԱՄՆ դոլար, և նրանց աշխատանքները կդիտարկվեն National Geographic-ի էլեկտրոնային տարբերակում հրապարակելու համար:

Մանրամասները՝ <https://www.nationalgeographic.org/funding-opportunities/innovation-challenges/plastic/dataviz>

Վերջնաժամկետ՝ 11 հունիսի, 2019թ

## 2. Ընդունվում են հայտեր «Հեռանկարներ» ծրագրի «Անդրսահմանային լրագրություն» նախագծի VII-րդ փուլի համար

Ռուսաստանի, Ուկրաինայի, Բալթյան և Արևելյան Եվրոպայի, Կենտրոնական Ասիայի և Կովկասի երկրների լրագրողներն ու բլոգերները, որոնք ունեն 3-ից 20 տարվա աշխատանքային փորձ, կարող են դիմել այս մրցույթին: Robert Bosch Stiftung-ի, Fritt Ord Foundation-ի և Thomson Reuters Foundation-ի ֆինանսավորած «Հեռանկարներ» ծրագիրն անցկացնում է «Անդրսահմանային լրագրություն» մենթորական նախագծի հերթական փուլը, որի ընթացքում նշված երկրների լրագրողները կարող են համատեղ աշխատել: Այս անգամ նախագիծը կանցկացվի Հյուսիսային և Հարավային Կովկասի քաղաքներում: Ընտրված մասնագետներին կտրամադրվի մասնագիտական մենթորական աջակցություն: Կազմակերպիչները կհոգան այնպիսի ծախսեր, ինչպիսիք են հանդիպումներին ու վարպետության դասերին հաճախելը, կարճաժամկետ հետաքննական գործուղումները և անդրսահմանային նախագծեր պատրաստելու համար անհրաժեշտ ծախսերը: Լրագրողական նախագծի գաղափարը պետք է առնչվի մի քանի երկրների համար կարևորություն ունեցող թեմայի: Աշխատանքային լեզուն ռուսերենն է:

Մանրամասները՝ <http://www.perspektivy.media/ru/whats-happening/i/?id=fc0d27cf-7ea8-4044-aea8-1dcac7b9f6ef>

Վերջնաժամկետ՝ 12 հունիսի, 2019 թ

### 3. Կրթաթոշակներ անվտանգության թեմայով դասընթացի մասնակցության համար

Կրթաթոշակի համար կարող են դիմել այն անկախ լրագրողները և վավերագրական ֆիլմերի հեղինակները, որոնց աշխատանքները նվիրված են մարդու իրավունքների ոտնահարմանը:

Canadian Journalism Forum on Violence and Trauma-ն հայտարարում է մրցույթ Portenier Human Rights Bursary կրթաթոշակների համար, որոնց ֆինանսավորումը տրամադրում է Ժիզել Պորտենիեն (Giselle Portenier): Դիմել կարող են փորձառու և սկսնակ ազատ լրագրողները ամբողջ աշխարհից: Դիմորդները պետք է հիմնավորեն մարդու իրավունքների ոտնահարման թեմայով իրենց հետաքրքրությունը և ներկայացնեն թիմի առաջիկա աշխատանքը կամ նախագիծը: Մրցույթի հաղթողը կստանա 3,000 կանադական դոլարի կրթաթոշակ անվտանգության թեմայով դասընթացի մասնակցության համար:

Մանրամասները՝ <http://www.journalismforum.ca/home/fff-1-in-progress/portenier-under-constuction>

Վերջնաժամկետը՝ 12 հունիսի, 2019 թ

### 4. Հետաքննական ազատ լրագրողներ և խմբագիրներ (Freelance Investigative Reporters and Editors (FIRE)). Հետաքննական պատմությունների ծրագիր

FIRE-ը հայտարարում է իր վիրտուալ խմբագրության նոր փուլի մրցույթը, որի հաղթող անկախ լրագրողները խորհրդատվություն կստանան հետաքննություն անցկացնելու համար, ինչպես նաև դրամաշնորհներ 12,500 ԱՄՆ դոլարի չափով:

Մանրամասները՝ <http://www.firenewsroom.org/program/guidelines-and-application?fbclid=IwAR0fqvRvepVqC9OFYSFvBA1nTckh4Nt1SC3eF60aePwhjW4hJAJ2gByGQug>

Վերջնաժամկետը՝ 12 հունիսի, 2019 թ

## 5. The Digital Communication Network-ի 2019թ-ի ծրագիրը

Վերջինս փոխանակման ծրագիր է, որի նպատակն է ուսումնասիրել, թե ինչպես են թվային ինֆորմացիոն տեխնոլոգիաները ազդել մեր կենսակերպի վրա լրատվամիջոցների, մասնավոր սեկտորի, հասարակական կազմակերպությունների և քաղաքացիական շարժումների տեսակետից: Բաց մրցույթի արդյունքում կընտրվեն 16 լրագրողներ, որոնք սեպտեմբերի 11-ից հոկտեմբերի 11-ը կայցելեն Միացյալ Նահանգներ մեկամսյա մասնագիտական ծրագրի մասնակցելու համար: Դիմել կարող են լրագրողներ և/կամ հաղորդակցության մասնագետներ: Նրանք պետք է լինեն մեդիա կազմակերպությունների, քաղաքացիական շարժումների, հաղորդակցությամբ զբաղվող ընկերությունների կամ հասարակական կազմակերպությունների աշխատակիցներ և հատկապես զբաղվեն առցանց հաղորդակցության ընթացքում մեդիա մեթոդների և նոր գործիքների օգտագործմամբ:

Մանրամասները՝ [https://worldlearninginnovanddev.wufoo.com/forms/r1kcrxvq0inpk6k/?fbclid=IwAR3Q4h3aodOZWQsJ\\_K0UxwjSRjmnQVRM-NCzoKL7NHVkcQON\\_fRriqDbiMs](https://worldlearninginnovanddev.wufoo.com/forms/r1kcrxvq0inpk6k/?fbclid=IwAR3Q4h3aodOZWQsJ_K0UxwjSRjmnQVRM-NCzoKL7NHVkcQON_fRriqDbiMs)

Վերջնաժամկետը՝ 15 հունիսի, 2019 թ

## 6. Logan Nonfiction միջազգային կրթաթոշակներ

Կրթաթոշակներին կարող են դիմել ծավալուն վավերագրական նախագծերի վրա աշխատող լրագրողները, վավերագրական ֆիլմերի հեղինակները, լուսանկարիչները և մուլտիմեդիա նյութեր արտադրողները: Կրթաթոշակային ծրագիրը կանցկացվի հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսների ընթացքում Քերիի անվան ինստիտուտում, Նյու Յորք:

Ծրագրի նպատակն է ժողովրդավարության խթանումը՝ անկախ լրագրողական հետաքննություններին աջակցելու միջոցով: Դիմորդները պետք է ներկայացնեն հայտ և նախագծի գաղափարը, որը պետք է լինի սոցիալական նշանակություն ունեցող թեմայով՝ քաղաքականություն, առողջապահություն, բնապահպանություն, մարդու իրավունքների պաշտպանություն: Կազմակերպիչները կհոգան կեցության և սննդի ծախսերը, ինչպես նաև կտրամադրեն խորհրդատվություն 10 շաբաթ ժամկետով:

Մանրամասները՝ <https://careyinstitute.org/programs/nonfiction/nonfiction-fellowship/application-guidelines>

Վերջնաժամկետը՝ 15 հունիսի, 2019թ

## 7. Սեմինար Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երիտասարդ լրագրողների համար M100 Young European Journalists Workshop 2019

Դիմել կարող են Արևելյան գործընկերության երկրների (Հայաստան, Վրաստան, Ադրբեջան, Բելոռուս, Մոլդովա, Ուկրաինա) և Ռուսաստանի 18-26 տարեկան լրագրողները:

Գերմանիայի արտաքին գործերի նախարարության և Deutsche Welle-ի աջակցությամբ կազմակերպված M100 սեմինարը տեղի կունենա սեպտեմբերի 9-ից 18-ը Պոտսդամում և Բեռլինում, Գերմանիա: Թեման է՝ «Ընթերցանությունը թվային աշխարհում. նորարարական լրագրություն»:

Օրակարգում կլինեն ինչպես տեսական, այնպես էլ գործնական պարապմունքներ: Հետաքրքրված լրագրողները պետք է ներկայացնեն իրենց նախագծերի գաղափարը:

Մանրամասները՝ <http://www.m100potsdam.org/en/m100/m100-young-european-journalists/application>

Վերջնաժամկետը՝ 16 հունիսի, 2019թ

## 8. Սոցիալական հարցերի լուսաբանմանը նվիրված ծրագիր Արևելյան Եվրոպայի և Կովկասի լրագրողների համար

Ֆրիդրիխ Էբերտի հիմնադրամի տարածաշրջանային գրասենյակի «Արևելյան Եվրոպայի երկխոսություն» ծրագիրն ընդունում է հայտեր սեմինարի մասնակցության համար: Սոցիալական հարցերի լուսաբանմանը նվիրված այս սեմինարը տեղի կունենա հուլիսի 23-ից 27-ը Օդեսայում: Դիմել կարող են մեդիայում առնվազն երկու տարվա աշխատանքային փորձ ունեցող լրագրողներ և բլոգերներ Եվրոպայից, Արևելյան գործընկերության երկրներից և Ռուսաստանից:

Ծրագրի խնդիրներն են՝ բարձրացնել սոցիալական և տնտեսական քաղաքականություն լուսաբանող լրագրողների մասնագիտական մակարդակը, նպաստել Արևելյան գործընկերության երկրների և Ռուսաստանի մասնագետների հմտությունների ու փորձի ազատ փոխանակմանը:

Օրակարգում են հանդիպումներ սոցիալական և աշխատանքային քաղաքականություն լուսաբանող լրագրողների և փորձագետների հետ: Աշխատանքային լեզուներն են ռուսերենն ու անգլերենը: Կազմակերպիչները կհոգան ծրագրի հետ կապված ծախսերը:

Մանրամասները՝ [http://fes-dee.org/n/cms/25/?tx\\_news\\_pi1%5Bnews%5D=433&tx\\_news\\_pi1%5Bcontroller%5D=News&tx\\_news\\_pi1%5Baction%5D=detail&cHash=bfe80808697aa75514170a502e04a0b9](http://fes-dee.org/n/cms/25/?tx_news_pi1%5Bnews%5D=433&tx_news_pi1%5Bcontroller%5D=News&tx_news_pi1%5Baction%5D=detail&cHash=bfe80808697aa75514170a502e04a0b9)

Վերջնաժամկետը՝ 16 հունիսի, 2019 թ

## 9. Հետաքննական լրագրության ամառային դպրոցին մասնակցության կրթաթոշակներ

Դիմել կարող են Արևելյան Գործընկերության և Բալթյան երկրների լրագրողները: Ամառային դպրոցը կանցկացնի Մեդիա հետաքննությունների կենտրոնը օգոստոսի 14-17 Ռիգայում, Լատվիա:

Դպրոցի թեմաներն են՝ խմբագրություն, ռադիո և փողքասթինգ, վիզուալիզացիա, ինտերնետում տեղեկատվության փնտրում, կազմակերպված հանցագործությունների և կոռուպցիայի թեմաների լուսաբանում և այլն: Դպրոցը կվարի լրագրող, Cambridge Analytical-ի գործունեությունը հետաքննող Քերոլ Քադվալադը:

Ուսուցման ծրագրի վարձը 350 եվրո է: Արևելյան Գործընկերության և Բալթյան երկրների լրագրողները կարող են դիմել կրթաթոշակների համար:

Մանրամասները՝ <https://www.media-summerschool.lv>

Վերջնաժամկետը՝ 21 հունիսի, 2019թ

## 10. Adami Tandem մրցույթը հեռարձակողների և հեռուստատեսային լրագրողների համար

ADAMI Media Prize-ը շնորհվում է Արևելյան Եվրոպայի երկրների հեռարձակողներին ու հեռուստատեսային լրագրողներին մշակութային բազմազանության համար: Մշակութային բազմազանություն լուսաբանող լրագրողները կարող են ներկայացնել իրենց՝ մինչև չորս բույս տևողությամբ նորությունների թողարկումները:

Մանրամասները՝ [https://www.adamimediaprize.eu/new-page-19?fbclid=IwAR2HAwDlm5tXg1yMQN-hDf-DpANlck8uKWK8iZYumZDMFI63keGqWmj\\_huw](https://www.adamimediaprize.eu/new-page-19?fbclid=IwAR2HAwDlm5tXg1yMQN-hDf-DpANlck8uKWK8iZYumZDMFI63keGqWmj_huw)

Վերջնաժամկետը՝ 24 հունիսի, 2019 թ

## 11. The Globe Post-ի մրցույթը լրագրողների համար

The Globe Post-ը հայտարարում է մրցույթ սկսնակ լրագրողների և ուսանողների համար: Նրանք կարող են ներկայացնել նախկինում երբևէ չհրատարակված լրագրողական նյութեր անգլերենով, որոնք նվիրված են որոշակի երկրում կամ տարածաշրջանում մամուլի ազատությանը, մարդու իրավունքներին, անդրասահմանային խնդիրների և ցանկացած վիճահարույց ու քիչ լուսաբանված թեմաների:

Մանրամասները՝ <https://theglobepost.com/2019/05/03/globe-post-journalism-contest>


Վերջնաժամկետը՝ 30 հունիսի, 2019 թ

## 12. National Geographic-ի դրամաշնորհները միգրացիայի մասին նախագծերի համար

National Geographic Society-ն ընդունում է հայտեր մարդկանց միգրացիայի մասին վավերագրական նախագծեր իրականացնելու համար: Դիմել կարող են սթորիթելինգի վարպետներ, շրջակա միջավայրի պաշտպաններ, ուսուցանողներ և հետազոտողներ: Նախագծերը կարող են պատմել ժամանակակից աշխարհում մարդկանց միգրացիայի պատճառների և հետևանքների կամ այսօրվա միգրանտների կյանքի, նրանց ճանապարհորդությունների և ընդունող հասարակության մասին: Կղիտարկվեն նաև նախագծեր, որոնց հեղինակները կստեղծեն և կփորձարկեն միգրանտների փորձառության մասին ուսումնական նյութեր, ուսումնական պլաններ կամ տեղեկատվական նյութեր: Դրամաշնորհների միջին գումարը՝ մինչև 30,000 ԱՄՆ դոլար, սակայն կարող են հասնել նաև մինչև 70,000 ԱՄՆ դոլարի:

Մանրամասները՝ <https://www.nationalgeographic.org/funding-opportunities/grants/what-we-fund/documenting-human-migrations>

Վերջնաժամկետը՝ 10 հուլիսի, 2019 թ





### 13. Փոքր դրամաշնորհների մրցույթ միջտարածաշրջանային հետազոտությունների համար

Journalismfund.eu-ն ընդունում է եվրոպական անդրսահմանային դրամաշնորհային հայտեր: Դիմել կարող են պրոֆեսիոնալ լրագրողները եվրոպական հարցերով անդրսահմանային հետաքննությունների և ուսումնասիրությունների համար: Պատմությունները պետք է ակտուալ լինեն եվրոպական թիրախ խմբերի համար: Դրամաշնորհային ընդհանուր ֆոնդը կազմում է 195,000 եվրո չորս նախագծերի համար:

Մանրամասները՝ <https://www.journalismfund.eu/european-cross-border-grants>

Վերջնաժամկետը՝ 15 հուլիսի, 2019 թ

### 14. Եվրոպական հանձնաժողովում պրակտիկայի հնարավորություն լրագրողների համար

Դիմել կարող են 18-ից 30 տարեկան երիտասարդ լրագրողներ և լրագրության ֆակուլտետների ուսանողներ: Հոկտեմբերի 6-ից 11-ը Եվրոպական հանձնաժողովը Բրյուսելում կիրականացնի լրագրողների համար մի ծրագիր, որի նպատակը կլինի ԵՄ անդամ երկրներում իրականացվող միջոցառումների քննարկումը: Ծրագրի շրջանակներում մասնակիցները կհաճախեն լրագրողական դասընթացների, կաշխատեն փորձառու լրագրողների հետ, կայցելեն ԵՄ-ի՝ լրատվամիջոցների հարցերով գլխավոր գրասենյակը և այլ հաստատություններ: Մասնակցության համար անհրաժեշտ է ներկայացնել հոդված (400 - 1000 բառ) և սեփական արտադրության կարճ տեսանյութ (2-3 րոպե): Հոդվածը կամ տեսանյութը պետք է լինեն Տարածաշրջանային զարգացման եվրոպական ֆոնդի կամ Միասնության ֆոնդի ֆինանսավորած ծրագրերի կամ իրադարձությունների մասին:

Մանրամասները՝ <https://youth4regions.win>

Վերջնաժամկետը՝ 15 հուլիսի, 2019 թ

## 15. Մեմինար երիտասարդ լրագրողների համար

Մեդիա ուսուցման սաքսոնական ֆոնդը <http://www.ssm-medienstiftung.de/> անցկացնում է տասնօրյա սեմինար Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երիտասարդ լրագրողների համար: Տպագիր մամուլի, հեռուստատեսության, առցանց լրատվամիջոցների և ռադիոլրագրողները (մինչև 40 տարեկան), որոնք տիրապետում են գերմաներենին, կարող են մասնակցել այս անվճար սեմինարին: Նպատակն է օտարերկրյա լրագրողներին հնարավորություն ընձեռել ծանոթանալու գերմանական լրատվամիջոցների աշխատանքին և ամրապնդել տարբեր երկրների լրագրողների միջև կապերը: Կազմակերպիչը կհոգա ճանապարհածախսը, կեցության և սննդի ծախսերը: Մեմինարը կանցկացվի սեպտեմբերի 16-ից 27-ը Լեյպցիգում, Գերմանիա:

Մանրամասները՝ <http://www.ssm-seminar.de>


Վերջնաժամկետ՝ 2 օգոստոսի, 2019 թ

## 16. Open Eurasia-ի միջազգային ստեղծագործական մրցույթը

Open Eurasia-ի այս տարեկան մրցույթը նախատեսված է գրողների, պոետների, թարգմանիչների, լրագրողների և իլյուստրատորների համար: Մրցանակային ֆոնդը կազմում է 31,000 ԱՄՆ դոլար: Մրցույթը հաղթողները գիրք հրատարակելու և 2020թ-ի Open Eurasian Book Forum-ում և Literature Festival-ում, ինչպես նաև Եվրասիայի այլ հարթակներում ներկայացնելու համար գումար ստանալ: Հայտերն ընդունվում են առցանց, ռուսերեն, անգլերեն, ղազախերեն, ուզբեկերեն, տաջիկերեն, բելոռուսերեն՝ կախված նումինացիայից:

Մանրամասները՝ <http://www.awardslondon.com/uslovia>

Վերջնաժամկետը՝ 15 սեպտեմբերի, 2019թ




## 17. Սոցիալական ցանցերի համար տեսահոլովակների պատրաստման վարպետանոց

Աշխարհագրություն՝ Հայաստան, Վրաստան, Ադրբեջան

Ծրագրին մասնակցելու համար կարող են դիմել 18-ից 26 տարեկան քաղաքացիական ակտիվիստներ, լրագրողներ և բլոգերներ: Ուկրաինայի կաթոլիկ համալսարանի լրագրության դպրոցը, Լվովյան մեդիա ֆորումը և Պրահայի քաղաքացիական կենտրոնը կազմակերպում են «Լվովյան վիդեոփեստ 2019» վարպետանոց, որի արդյունքում կպատրասվեն տեսահոլովակներ սոցիալական ցանցերի համար: Միջոցառումը տեղի կունենա օգոստոսի 18-ից 27-ը Լվովում: Մասնակիցները կսովորեն պատրաստել շատ այցելություններ ունեցող կարճ տեսանյութեր սոցիալական ցանցերի համար: Օրակարգում են նկարահանումը, մոնտաժը և սցենարի մշակումը: Աշխատանքային լեզուն՝ ռուսերեն ու անգլերեն: Կազմակերպիչները կհոգան մասնակիցների ճանապարհաճախար, կեցության, սննդի և ուսման հետ կապված ծախսերը:

Մանրամասները՝ <https://bit.ly/2wx5U2k>

Վերջնաժամկետը՝ 20 հունիսի, 2019 թ





© Մեդիա գերազանցության բալթյան կենտրոն, 2019թ.

Տեղեկագիրը պատրաստվել է անվճար տարածելու համար:

Պատրաստել են՝ Ալինա Ռուդինան,  
Արշալույս Մուրադյանը, Դիանա Խոդովինան,  
Եվգենիա Օլիյնիկը, Կատրինա Տետերե-Ֆրոլովան,  
Մարտինշ Մուրնիեկսը, Նաիլա Ալիևան,  
Թամար Խոբբալաձեն, Վիկտոր Գոտիսան:

Հայերեն թարգմանությունը՝ Արշալույս Մուրադյան:

Մեդիա գերազանցության բալթյան կենտրոնը պատասխանատվություն չի կրում թարգմանության ճշգրտության համար: Դոնորների և դրամաշնորհային ծրագրերի մասին տեղեկատվությունը սպառիչ չէ: տեղեկագիրը պատրաստողները իրավունք են վերապահել ընտրել առավել նշանակալից հնարավորությունները: Կենտրոնը խորհուրդ է տալիս դիմումները պատրաստելիս, դոնորների հետ հաղորդակցվելիս և տեղեկագրում ներկայացված նյութերը օգտագործելիս առաջնորդվել միայն սկզբնական/առաջնային աղբյուրներով:

Տեղեկագրում օգտագործվել են նյութեր հետևյալ աղբյուրներից.

- [nationalgeographic.org](http://nationalgeographic.org)
- [perspektivy.media](http://perspektivy.media)
- [journalismforum.ca](http://journalismforum.ca)
- [firenewsroom.org](http://firenewsroom.org)
- [worldlearninginnovanddev.wufoo.com](http://worldlearninginnovanddev.wufoo.com)
- [careyinstitute.org](http://careyinstitute.org)
- [m100potsdam.org](http://m100potsdam.org)
- [fes-dee.org](http://fes-dee.org)
- [media-summerhschool.lv](http://media-summerhschool.lv)
- [adamimediaprize.eu](http://adamimediaprize.eu)
- [theglobepost.com](http://theglobepost.com)
- [nationalgeographic.org](http://nationalgeographic.org)
- [journalismfund.eu](http://journalismfund.eu)
- [youth4regions.win](http://youth4regions.win)
- [ssm-seminar.de](http://ssm-seminar.de)
- [awardslondon.com](http://awardslondon.com)
- [ijn.net.org](http://ijn.net.org)
- [baj.by](http://baj.by)
- [humphreyfellowship.org](http://humphreyfellowship.org)
- [penalreform.org](http://penalreform.org)
- [grants.gov.ge](http://grants.gov.ge)
- [gaen.org.ge](http://gaen.org.ge)
- [hackathon5.media-azi.md](http://hackathon5.media-azi.md)
- [europewb.org.ua](http://europewb.org.ua)
- [mfa.bg](http://mfa.bg)
- [gurt.org.ua](http://gurt.org.ua)

